ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/10

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
Մասնակից՝ «Նորք-7» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/2-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ» ծածկագրով գնանշման հարցում, սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ. թիվ 26/26-1/756-2020 գրությամբ «Նորք-7» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 17.01.2020թ.ի թիվ 20/35 գրության հիման վրա, 23.01.2020թ.-ին «Նորք-7» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 23.01.2020թ.-ին և 24.01.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ:

03.02.2020թ.-ին նշանակվել է նիստ և նույն օրը Բողոքի քննությունն ավարտվել է:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.02.2020թ.-ին:

2. <u>ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 17.01.2020թ.ի թիվ 20/35 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել է թիվ «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/2-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ» ծածկագրով գնման ընթացակարգի փաստաթղթերը և «Նորք-7» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Նորք-7» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 23.01.2020թ.ի գրությամբ դիմել է «Նորք-7» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ. թիվ 26/26-1/756-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում կամ կարծիք՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2020/10 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 05.12.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/2-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Նորք-7» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 13.12.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և բոլոր չափաբաժինների մասով գնային առաջարկներ ներկայացրած բոլոր բավարար գնահատված մասնակիցների հետ, իրենց ներկայացրած համապատասխան չափաբաժինների մասով գների նվազեցման նպատակով վարել միաժամանակյա բանակցություններ:

Հանձնաժողովի 19.12.2019թ.-ի կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի թիվ 34-րդ չափաբաժնի մասով «Նորք-7» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից և հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու օրվան հաջորդող հրավերով սահմանված ժամկետում:

Հանձնաժողովի 09.01.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով Մասնակցի կողմից ներկայացրած առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագրերը և գնահատման թերթիկները և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից հավելվածներ թիվ 3-ը և թիվ 3.1-ը ներկայացվել են ժամկետի խախտմամբ, ինչպես նաև հավելված թիվ 3.1-ում ներկայացված են նաև այլ չաւիաբաժինների նկարագրեր, այն դեպքում, երբ Մասնակիցը 1-ին տեղը զբաղեցրած է ճանաչվել միայն թիվ 34-րդ չափաբաժնի մասով, ուստի Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և «Նորք-7» ՍՊԸ-ին առաջարկել շտկելու արձանագրած անհամապատասխանությունները հրավերի 7.18-րդ կետով սահմանված կարգով և ժամկետներում:

Հանձնաժողովի 15.01.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով 09.01.2020թ.-ի արձանագրության 1.2. և 1.3. կետերը և «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից

ներկայացրած շտկած փաստաթղթերը և հաշվի անելով այն հանգամանքը, որ Մասնակցի կողմից թիվ 34 չափաբաժնի մասով Հրավերի 3.1 հավելվածով ներկայացվել է հրավերի պահանջների չհամապատասխանող (չի նշել ԳՕՍՏ-ը, սախարոզը՝ 50,5%, պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 8 ամիս) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ Հանձնաժողովը որոշել է «Նորք-7» ՍՊԸ-ի հայտը թիվ 34 չափաբաժնի մասով մերժել:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/756-2020 գրությամբ «Նորք-7» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետի համաձայն՝ … գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը …

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

4) էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա

ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ … անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից

ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատաս-խանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատաս-խանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 05.12.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/2-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Նորք-7» ՍՊԸ-ն և Հանձնաժողովի 19.12.2019թ.-ի կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ թիվ 34-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի 09.01.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից հավելվածներ թիվ 3-ը և թիվ 3.1-ը

ներկայացվել են ժամկետի խախտմամբ, ինչպես նաև հավելված թիվ 3.1-ում ներկայացված են նաև այլ չափաբաժինների նկարագրեր, այն դեպքում, երբ Մասնակիցը 1-ին տեղը զբաղեցրած է ճանաչվել միայն թիվ 34-րդ չափաբաժնի մասով, ուստի Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և «Նորք-7» ՍՊԸ-ին առաջարկել շտկելու արձանագրած անհամապատասխանությունները հրավերի 7.18-րդ կետով սահմանված կարգով և ժամկետներում:

Հանձնաժողովի 15.01.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից թիվ 34 չափաբաժնի մասով Հրավերի 3.1 հավելվածով ներկայացվել է հրավերի պահանջների չհամապատասխանող (չի նշել ԳՕՍՏ-ը, սախարոզը՝ 50,5%, պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 8 ամիս) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր, ինչով պայմանավորված «Նորք-7» ՍՊԸ-ի հայտը թիվ 34 չափաբաժնի մասով մերժվել է:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովի 09.01.2020թ.-ի կայացած թիվ 4 արձանագրությամբ մանրամասն չի նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունները: Հանձնաժողովի կողմից արձանագրվելով, որ *«Նորք-7» ՍՊԸ-ի կողմից հավելվածներ թիվ 3-ը և թիվ 3.1-ը ներկայացվել են ժամկետի խախտմամբ, ինչպես նաև հավելված թիվ 3.1-ում ներկայացված են նաև այլ չափաբաժինների նկարագրեր, այն դեպքում, երբ Մասնակիցը 1-ին տեղը զբաղեցրած է ճանաչվել միայն թիվ 34-րդ չափաբաժնի մասով»,* գործում առկա նյութերի համաձայն չի հիմնավորվում թե ե՞րբ է Մասնակցին ուղարկվել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրեր ներկայացնելու մասին ծանուցումը, հետևաբար անհնար է պարզել, արդյո՞ք Մասնակիցը վերը նշված հավելվածները ներկայացրել է ժամկետի խախտմամբ թե՞ ոչ: Բացի այդ «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված թիվ 3.1-ում ներկայացված է եղել ինչպես այլ, այնպես էլ թիվ 34-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Հետևաբար թիվ 4 արձանագրությամբ անհամապատասխանություններ արձանագրելը և այն շտկելու առաջարկ ներկայացնելը չի կարող օբյեկտիվորեն թույլ տալ եզրահանգելու, թե Մասնակցի կողմից հավելված 3.1-ում անհամապատասխանությունը նաև վերաբերում է թիվ 34-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրին թե ոչ, որպեսզի հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ փաստելու կամ հերքելու Հանձնաժողովի եզրահանգումը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Նորք-7» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին Հանձնաժողովի կողմից 15.01.2020թ.-ի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումն ոչ իրավաչափ է, չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված սկզբունքներից և պահանջներից, հակասում է Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետի և Կարգի 46-րդ կետի դրույթներին:

Ուստի, վերոնշյալներով պայմանավորված, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/756-2020 գրությամբ «Նորք-7» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/10 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**